Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 040226233 արձանագրության համաձայն ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը պարզեցի՝ ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 248 զեկուցագրի համաձայն էկոպարեկային ծառայությունը N40.541899 E44.991200 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված և կառուցված՝ երկու հատ վագոն-տնակ, մեկ հատ մետաղական զրուցարան: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել են շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, 48-րդ

հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ N 40.541899 E 44.991200 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 05
ք.Սևան

2950

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2696-Ա

ՀՀ ՇՄՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ 040226234 ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ N40.535512 E44.970842 ՏԵՂԱԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 040226234 արձանագրության համաձայն ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 248 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N 40.535512 E 44.970842 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված և կառուցված՝ երկու հատ մետաղական վագոն-տնակ: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել են շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, 48-րդ

հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ N 40.535512 E 44.970842 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 05
ք.Սևան

2952

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2697-Ա

ՀՀ ՇՄՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ 040226237 ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ N40.535541 E44.982535 ՏԵՂԱԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 040226237 արձանագրության համաձայն ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 248 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N40.535541 E44.982535 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված և կառուցված՝ 1հատ մետաղյա վագոն տնակ, 7հատ զրուցարան, 1հատ քարե սանհանգույց, 4հատ կիսաքանդ շինություն: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել են շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ

հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ N 40.535541 E 44.982535 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:շ
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2698-Ա

ՀՀ ՇՄՆ ԷԿՈՊԱՐԵԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ 040226225 ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆ՝ N40.562981 E45.008183 ՏԵՂԱԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ ՇՄՆ էկոպարեկային ծառայության 040226225 արձանագրության համաձայն ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ին անհատույց և մշտական իրավունքով պատկանող հողատարածքում անհայտ ֆիզիկական անձի կողմից տեղադրված ինքնակամ տեղադրված շինությունների փաստը՝ պարզեցի. ««Սևան» ԱՊ» ՊՈԱԿ-ի թիվ 248 զեկուցագրի համաձայն՝ էկոպարեկային ծառայությունը N40.562981 E45.008183 տեղադիրք ունեցող հողատարածքում հայտնաբերել է ինքնակամ տեղադրված և կառուցված՝ մեկ հատ քարե շենք: Սևանի համայնքապետարանը օգտագործել է բոլոր հնարավոր միջոցները իրավախախտ ֆիզիկական անձի ինքնությունը պարզելու համար: Իրավախախտման դեպքի մանրամասն բացահայտման համար Սևան համայնքի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթի կասեցման որոշում: Սակայն այդ ընթացքում ևս հնարավոր չի եղել հայտնաբերել իրավախախտին: Հիմնավորված է այն փաստը, որ խախտվել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության կամ տեղադրման թույլտվության, ինքնակամ կառուցվել կամ տեղադրվել են շինություններ: Խախտվել է նաև ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 48-րդ հոդվածի պահանջները՝ այն է իրավախախտ անձը ապօրինի զբաղեցնում է հողատարածք: Հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման

2-րդ կետի, ՀՀ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ N 40.562981 E 45.008183 տեղադիրք ունեցող հողատարածքում առկա ինքնակամ տեղադրված շինությունները:
2. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
3. Իրավախախտ ֆիզիկական անձի նկատմամբ վարչական տույժի նշանակման մասով վարույթը կարճել:
4. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:2
5. Սույն որոշումն ուժի մեջ է օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 05
ք.Սևան

2956

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2699-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով Մակիչ Արտյոմի Մաթևոսյանին պատկանող, ք. Սևան, Պռոշյան 41 հողատարածք հասցեում գտնվող հողամասի / վկայական՝ 2397464, տրված՝ 02.07.2009թ. / սահմանները, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ ք. Սևան, Պռոշյան փողոց թիվ 41 հողատարածք հասցեում գտնվող հողամասի սահմանները:
2. Ք. Սևան, Պռոշյան փողոց թիվ 41 հողատարածք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Մ. Մելքոնյան փողոց թիվ 13 հողամաս հասցե:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 05
ք.Սևան

2957

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2700-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Արման Առաքելյանի դիմումը՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի արևելյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 24.44քմ մակերեսով ավտոտնակը, 14.00քմ մակերեսով նկուղն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Արման Վանյայի Առաքելյանի կողմից՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի արևելյան հատվածում՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 24.44 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 23.98քմ/, 14.00քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 11.71քմ/ և զբաղեցրած 24.44 քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Արման Վանյայի Առաքելյանի կողմից ինքնակամ 24.44 քմ մակերեսով ավտոտնակը, 14.00քմ մակերեսով նկուղը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026LHUYL9 /՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 7 / 20 ավտոտնակ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 5-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 05
ք.Սևան

2959

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2701-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Մանուկ Ներսիսյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոցի թիվ 47 շենքի հարևանությամբ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 26.10 քմ մակերեսով ավտոտնակը և 8.74 քմ մակերեսով նկուղն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Մանուկ Լադիկի Ներսիսյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոցի թիվ 47 շենքի հարևանությամբ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում 1994 թվականին ինքնակամ կառուցված 26.10 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 24.67 քմ/, 8.74 քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 5.54 քմ/ և զբաղեցրած 26.10 քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Մանուկ Լադիկի Ներսիսյանի կողմից ինքնակամ կառուցված 26.10 քմ մակերեսով ավտոտնակը և 8.74 քմ մակերեսով նկուղը ճանաչել օրինական /հաշվառման

տեղեկանք՝ 20262ЕНТ37/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 47 / 51 ավտոտնակ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2702-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Գեղամ Պարույրի Մաթևոսյանի լիազոր անձ Անահիտ Պարույրի Մաթևոսյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 176 շենքն կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 27.20 քմ մակերեսով ավտոտնակը, 18.20 քմ մակերեսով ծածկն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Գեղամ Մաթևոսյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 176 շենքին կից՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 27.20 քմ ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 23.40 քմ/, 18.20 քմ մակերեսով ծածկը /ներքին մակերեսը՝ 17.40 քմ/ և զբաղեցրած 45.40 քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Գեղամ Մաթևոսյանի կողմից ինքնակամ կառուցված 27.20 քմ ավտոտնակը, 18.20 քմ մակերեսով ծածկը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20269TGMD5/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 176 / 2 ավտոտնակ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 05
ք.Սևան

2963

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2703-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով Սիլվա Ալբերտի Վարդանյանի լիազոր անձ Գագիկ Վարդանյանի դիմումը՝ ք.Սևան, Սյունյաց փողոց թիվ 2 / 2 հասցեի հարևանությամբ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում ինքնակամ կառուցված 10.37քմ մակերեսով խորդանոցը և 4.14 քմ մակերեսով պարիսպն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**.

1. Սիլվա Ալբերտի Վարդանյանի կողմից՝ ք. Սևան, Սյունյաց փողոց թիվ 2 / 2 հասցեի հարևանությամբ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա ինքնակամ կառուցված 10.37 քմ. մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝ 8.90քմ/, 4.14քմ մակերեսով պարիսպը և զբաղեցրած 104քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք–1 միկրոռեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության հողատարածքի:
2. Սիլվա Ալբերտի Վարդանյանի կողմից ինքնակամ կառուցված 10.37քմ մակերեսով խորդանոցը, /ներքին մակերեսը՝ 8.90քմ/, 4.14 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026NEPHZD/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Կարմիր Բանակի փողոց թիվ 2 / 4 խորդանոց հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05.01.2026թ. N 5-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2704-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 22.09.2026թ N 133-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «Մարինե Սանամյան» ԱՁ -ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Մարինե Սանամյան» ԱՁ -իո / գործունեությունը՝ ք. Սևան, Շահումյան փողոց թիվ 35 / 31 հասցե / տրամադրել 2026թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների համար՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100դրամ, յուրաքանչյուր եռամսյակի համար;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100 դրամ, յուրաքանչյուր եռամսյակի համար :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 06
ք.Սևան

2966

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2705-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղ. Գևորգ Խաչատրյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Զովաբեր, 2-րդ փողոց թիվ 12 / 4 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 11112022-05-0006/ զբաղեցրած 0.277հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Գևորգ Վահրամի Խաչատրյանին պատկանող, Սևան համայնք, գ. Զովաբեր, 2-րդ փողոց թիվ 12 / 4 հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 0.0072հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.0071հա մակերեսով / հասցե՝ Սևան համայնք, գ. Զովաբեր, 2-րդ փողոց թիվ 28 / 1 հողամաս, վկայական՝ 22092026-05-0028/ ՝ ուղղակի վաճառքի կարգով օտարելով Գևորգ Վահրամի Խաչատրյանին՝ հողի կադաստրային արժեքը՝ 1քմ՝ 514.8դրամ վճարելու պայմանով:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 հոկտեմբերի 2026 թվականի թիվ 2706-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.04.2021թ. N 698-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել՝ սեփականության իրավունքով Աշոտ Ղազարյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ազատության փողոց թիվ 44 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N31082026-05-0025/ գծային չափերը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ազատության փողոց թիվ 44 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ N31082026-05-0025/ գծային չափերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2026 թվականի հոկտեմբերի 06
ք.Սևան

2968